

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Ժր.
Տարեկան	6 »
Վեցամսեայ	»
Արսասահմանի համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	3 սյր.
Տարեկան	1.50 »
Վեցամսեայ	»

Մանուցան սոյոք առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիւ կ. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը ըլլայ:

Վառնայի համար ձեռք 40 սանթիւ

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՐՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին և նոր զրկելի ինքնուրուքիս հասցիներ:

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна
Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արսասահմանի համար ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք և սյունք տրուի

«ՇԱՐՇՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԲԱՄԵՆԿԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ԵՐԵ ՅԱԶՈՂԵՒՆ

Դեռ ահանջիս մէջ կը թրթռան այս երկու բառերը զորս կ'արտասանէր, ասկէջ քանի մը տարի առաջ, աշնան աստեղաշող դիչք մը. Պուշկարիոյ առևտրական աշխարհին մէջ շատ ծանօթ դէպք մը. Պոլոս Փափազեան, որ այնպէս ի վեր գնաց հանգչիլ Ան Ժողին ամերիկայի վրայ:

Պոլոս Փափազեան հին սերունդին կը պատկանէր. և վաճառական էր. և գիտեց թէ մեր մէջ վաճառականները հակայեղափոխական են, այն գերազանց պատճառով որ այդ վտանգաւոր գործիքները տակնուվրայ կը ըլլան և չարչիական շահերը կը փրստուին. Ինքն ալ հակառակ էր յեղափոխութեան, վերջին ծայր պահանջողական, բայց միւս կողմէ բարի և ուղիամիտ:

Բարի հոգիները, սակայն, ըստի և յուրման բուպենբու ազդեցութեան կ'ենթարկուին երբեմն, և մեր պապա Փափազեանը երբ այդ շորս հինգ հոգիի հաւաքման մէջ յեղափոխութիւնն ու յեղափոխականները կը քարկոծուէին տխուր և հոտած բերաններէ: Խորհրդաւորորէն գլուխն երբ քննելով սա խօսքը նետեց տեսակ մը դառնութեամբ:

— Հապանոնք եթէ յաջողէին՝ պիտի վար դարնէինք զիրենք. Ինչպէս պիտի վառաբանէինք. ու հիմա ցեղերուն մէջ քաջկատած այդ մարդիկներուն արձաններ պիտի կանգնէինք, այնպէս չէ:

Հին սերնդեան մէջ կ'ենթարկայացուցիչին ընդին մէջ, — յայտնի պահանջողական և մանաւանդ վաճառական, — այս խօսքը անակնկալ զօրութիւն մը, հսկայ թիւիք մը կ'առնէր և անոյրք պատակի մը պէս կ'երթար գելանէլ քֆրոչ բերանները:

Ու իրաւ, վայրկեանական ներշնչման մը ուժին ներքեւ, ճշմարտութեան անկեղծ ըմբռնումէն յորդած այդ վսեմ խօսքը այն խարխալներէն մէկն է որուն վրայ կը թնամ կեցած է յեղափոխութեան պերճաբարաւ արդարացումը:

Եւ որովհետեւ սյս նիւթին վրայ հատորներով բան գրուած ըլլալէն ետքն իսկ՝ դեռ յեղափոխութեան անցեալ գործունէութիւնը վայրագորէն դատել դատապարտելը մեր բարքերուն մէջ մուտ գտած ախտ մըն է, ու տակաւին թերթեր կան որ այդ մզլոտած հին սրգին ճոթէն բռնած կերթան, աւելորդ չլուրեմն որ դարձեալ և գարձեալ այդ անմտանալի նիւթին դառնանք, և անոր շուրջը դեպքերինք՝ գէթ մասամբ առաջը առնելու համար լրբենի յանկերգողներուն ընդարմացնող, վհասեցնող տառուցներուն:

Յետագիմական վաճառականի մը անակնկալորէն իր գաղափարակիրներուն երեսն ի վեր նետած վերոյիշեալ խօսքին մէջ յայտնաբերուին ճշմարտութիւն մը կը հանգչի: Ու այդ խօսքը իրեն թելադրել տուողը միայն բարի հոգիի մը բուպենբու զարթնումը չէր, գերազանցապէս գործնական, վերձառու և հաշուադէտ մտքի մը արտայայտութիւնն էր ան:

Բացատրենք: Աշխարհի վրայ ամէն ձեռնարկ գլխաւորապէս երկու երեսութեան անցնելու. երկու տեսակ վստճանի յանդելու վիճակուած է. յաջողութեան և ձախորդութեան: Չկայ մարդկային արարած մը որ իր կեանքը շահելու համար ու է ձեռնարկութեան մը սկսած վայրկեանին հարիւրին հարիւր ապահով ըլլալ թէ յաջողութեամբ պիտի պսակուի իր գործը:

Անոր հաշուին մէջ ձախորդութեան պարտական ալ կայ: Միայն թէ՛ այս վերջին պարտական երբեք չարգիլելու անհատը ձեռնարկելու իր մտադրած գործին:

Ան կաշխատի, մարդկօրէն հնարաւոր ջանքը ի գործ կը դնէ ձախորդութիւնը իրմէ հեռացնելու. եւ յետոյ, եթէ աշխարհի ամէն ձեռնարկութիւնները յաջողութիւն գտնելու սահմանուած ըլլային, կեանքի պայքարը գոյութիւնն ունենալէ պիտի դադարէր ու մարդիկ անուշ երջանկութեան մը մէջ պիտի յաւանային:

Վաճառականը, արհեստաւորը, արուեստագէտը, հողագործը, մտքի և ձեռքի բոլոր աշխատաւորները՝ նախ քան գործի ձեռնարկելը՝ որոշապէս չեն գիտեր թէ՛ յաջողութեամբ պիտի պսակուի իրենց ձեռնարկը: Ամէն օր, աշխարհի ամէն կողմը, վաճառականներ կը սնանկանան, արհեստաւորներ ու արուեստագէտներ կը ձախորդին, մեծ ձեռնարկութիւններ՝ հաւաքական հսկայ ուժերով իրագործուած՝ կը վիճի կը փճանան, մտքի աշխատաւորներ՝ երկար տքնութիւններու տրոյնք իրենց յղացումներուն հրապարակումին մէջ յուսաւրիպումը և ձախորդութիւնն է որ կողմնակէն շատ հեղ:

Աշխարհի հիմնարկումէն ի վեր՝ մարդկային ցեղերը անդադրում մաքառումի մէջ են: Ազգերը իրարու դէմ կը պատերազմին ամէն ատեն: Այս յարատեւ բախումներու մէջ՝ ոչ ոք բախտին քմահաճոյքները կանխապէս հաշուի կ'առնէ: Յաջողութեան յոյսով ճամբայ կ'ըլլայ՝ ձախորդութիւնը կը գիմաւորէ: Ընդհակառակը, յաջողութեան բնաւ յոյս չունենալով՝ իրերու գէպերու անկեղծ բերմամբ մը այդ շուսացումս յաջողութիւնը կուգայ կը գտնայ զինքը:

Պատերազմները պիտի դադարէին, եթէ առաջուց գիտցուէր թէ՛ ո՛ր կողմը յաղթական պիտի ելլայ. վաճառականութիւնը պիտի կայար՝ եթէ յաջողութեան ու ձախորդութեան պարագաները առաջուրնէ յայտնի ըլլային. հեղինակը իր երկը չպիտի հրապարակ հանէր՝ եթէ կանխաւ

գիտնար անոր գտնելիք անըպատ ընդունելութիւնը: Վերջապէս կեանքի գործունէութեան մեքենան կանգ պիտի առնէր՝ եթէ ամէն ձեռնարկի վախճանը կանխաւ յայտնի ըլլար:

Յեղափոխութիւնը՝ ամէն ձեռնարկներու պէս ձեռնարկ մըն է, կախ մըն է ան բռնակալութեան դէմ մշուած յուսահատ, հալածական ազգի մը կողմէ: Ոչ ոք կրնայ գիտնալ յաջողութեան և ձախորդութեան պարագաները: Անյիշատակ ժամանակներէ ի վեր ժողովուրդներ ընդվզեցան, մաքառեցան, արիւն թափեցին, և ապատութիւնը կա՛մ ձեռք ձգեցին կա՛մ չձգեցին: Օրինակները կը հեծան: Միայն սա նոր ժամանակներու մէջ մեր առջեւ ունինք այս մաքառումներէն նմուշներ: Պալքանեան բոլոր պղտիկ ազգերը զէնք վերցուցին բռնութեան դէմ ու փրկուեցան: Իսկ անդին Լեհաստանն ու Թրանսիլվալիա իրենց զիջանական ըմբոստումին մէջ արեամբ ծածկուեցան և բռնակալին լուծը իջաւ վրանին աւելի ծանր:

Հայը իր դարաւոր քունէն վերցատքեց, վասնզի իր այդ թըմբութեան մէջ իր կեանքը ապրեցնող տրուելը քիչ քիչ բայց անդու կերպով ծծկու վրայ էին: Իր այս ստումը բնական, անհրաժեշտ, ճակատագրական էր: Ոչ ոք, ոչ մէկ բան պիտի կրնար արգիլել զայն: Ազգերուն մէջ ամեն հի բնազդներ կան, որոնց մայթը մինչ քան հնարին է գիմադրել:

Երբ որ յեղափոխութեան քարը կը զետեղուէր Հայաստանի հողին վրայ, անոր հիմնադրները չէին կրնար վերջնականապէս ապահովուիլ ձեռնարկին յաջողութեանը մասին: Կա՛մ պիտի յաջողէին կա՛մ պիտի ձախորդէին, ճա՛ր չիկար:

Ձախորդեցան: Սակայն այս ձախորդութիւնը իր տխուր շետեւանքներուն հետ հրաշալի ար-

գիւնքներ բերաւ թափուած արեան մէջէն նոր ծիւեր բազմութեան, որոնք յառաջիկայ յեղափոխական գեանին հաստարուն, վիժխարի ծառերը պիտի ըլլան: Զայտեցան, այո, բայց կրնային յաջողիլ ալ, եւ ինչպէս կըսէր Պողոս Փափազեան տխուր դառն շեշտով մը.

—Եթէ յաջողէին, արձաններ պիտի կ'անգնէինք անոնց համար, արձաններ:

Շաւարշ

ԱՆՅՈՐԴԻ ՆՈՅԵՐ

Պայագիտ, 20 օգոստոս

Ինչի մը օրերէ ի վեր մտած եմ թագրեանդի գաւառը՝ ուսումնասիրելու հայ ժողովրդեան ներկայ կեանքը ու անոր պայմանները՝ թուրք կառավարութեան աղէտալի ձեռքին տակ: Աւ տեսայ որ ժողովրդեան ինչքն ու ստացուածքը փճանալէ ետքը՝ այժմ ալ բացարձակապէս թող ստուած է անոր պատուոյն հետ խաղալ: Ետք չանցնիր որ բանի միջոցներով թուրք զօրքերը մէկ քանի հայ օրբորներ չփախցունեն: Ամէնուն կիրքին ճարակ դարձած է հայ ընտանեկան պատեր: Լկտի ու աշտոտ վարմունքներու դէմ ամէն բոլորք անլսելի կը մնայ:

Իբրև ցեղերը՝ մեծ մասամբ՝ անցելոյն մէջ իրենց եպերելի ընթացքէն ղգաստացած՝ երբ ա'լ կամք ու փափաք չունին շարունակելու փրենց շարագործութիւնները, կառավարութիւնն ու գինուորականութիւնը կուզեն լեցնել անոնց պակասը:

Անցելոյն շարունակութիւնը չխանգարելու համար այս անգամ զաղոնապէս արտօնած են ոստիկանները և զինուորները ընել ինչ որ քանի մը տարի առաջ քրտերուն բաժինն էր:

Թագրեանդ գաւառին քաղաքային ու զինուորական այս կեդրոնատեղւոյն մէջ, երբ մէկ ամսուան Վիճոցին երեք չորս պաշտիկներ առեանգուին զօրքերու ձեռքով, ու մէկ շարժումն մէջ քանի մը հայ տուններ գարձեալ զօրքերու և ոստիկաններու կողմէ կողոպտուին, ա'լ ձեռք կը թողու մերեակայել թէ գաւառին միւս մասերուն մէջ ինչքն տեղի կունենան: Այդ քակոյղ ու քանդող սարքը, երբ ըրդի որ շին մէջ ընակող լեշակեր Սուլթանէն հրահանգուած, հայուն ընաշնջման ծրագիրը հակառակ յառաջ կը տանի, որ առաջ՝ հայ անուան և հայկական հարցին վերջ մը տալու համար:

Աւ երբ հոս հայ ընտանեկան պատերը հրապարակով ամէն վատութեանց օրս կը ըլլայ, հայ օրի-

որդները՝ տաճկական աշտոտ հարեաններու մէջ իրենց կուսութիւնը կ'ողբան, հայ երիտասարդները կախապաններու վրայ կը ձօճան հայ օճախն ու հայաստան աշխարհը իր աւերակները կուլայ, ինչ կընեն արտասահմանի մէջ հանգիստ կեանք վարող երիտասարդները, հայ ջոյ ազաներն ու էֆէնտիները. անտարբեր, ձեռնածալ նստած՝ իրենց կաշիին զոյութիւնը պահպանել կը մտածեն: Ո՞ր է, յեղափոխութեան գործը ինչո՞ւ շարժարձուիր, ինչո՞ւ արժատական միջոցներ ձեռք չեն առնուի: Ինչ, Հայաստանը փճանալէն, մոխրի կոյտ մը դառնալէն ետքը անոր վերկութեան միջոցները ձեռք պիտի առնուին: Տնտեսաբան մանակ չէ, հայ եղբայրներ, շարժեցէ՛ք, խիզախեցէ՛ք, գործեցէ՛ք. եկէ՛ք մտէ՛ք Հայաստանի գաւառները և աչքովն ի գտնէք թէ ինչ կը ըլլայ կոր մեր սիրեցեալ հայրենիքը: Արտասահմանի մէջ իրարու գլուխ պատռելու, զիրար բղկտելու տեղ լաւագոյն չը՞լլար որ հոս գա՞ք՝ ձեր եղբայրներուն և քոյրերուն առաջնորդէ՛ք պաշտպանելու համար պատիւնին, կեանքերին և ինչքերին քանի որ տարրին դէմ: Մահուան ու կեանքի այս թանկագին ու վճռական լուսնին ինչո՞ւ զուր քրտերութեանը և ընդունայն պայքարներով ժամամանակ կը վատնէք. ետքը ձեռու ընդ գլուխն ի գտնէք պիտի դարնէք. բայց ի զուր:

Այցեդու

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ինչպէս արդէն յայտնի է, այժմ Պուլկարիոյ մէջ Մակեղոնիոյ ազատութեան համար գործող երկու կօմիտէներ կան: Մէկը Միխայիլովսքի-Յոնչէվի կօմիտէն, որ Մակեղոնիոյ հիմնական ապստամբութեան նախաձեռնարկը եղաւ և միւսը Պօրիս Սարգսի-Սիմոնիշի կօմիտէն, որուն կարծիքով դեռ ապստամբութեան ժամանակը չէր: Երկուս Սօֆիայի մակեղոնացի ուսանողներու կողմէն ջանքեր եղան այդ երկու կօմիտէները հաշտեցնելու, որ անոնք համերաշխութեամբ գործէին ապստամբութիւնը առաջ տանելու համար: Եւյն մտքով զիմուներ ըրին նաեւ վերջին անգամ Սօֆիա գաւառում մեծ միջոցներու ստիճի գաւառներէն վաղող պատուիրակները: Սակայն ղգաղաքար ու է կերպով հնար չեղաւ ի մի ձուլել այդ հայրենասիրութեամբ հաւատարմաց կարծիքով տարբեր տարբերը: Պ. Սիմոնիշի կօմիտէին անդամները, ինչպէս նաեւ Մակեղոնիոյ ներքին կազմակերպութեան ձեռնարկողները պնդեցին թէ ապստամբութեան ոչ հարկ եղածին պէս պատրաստուած եւ ոչ ալ ժամանակին սկսուած էր և թէ իրենք լաւագոյն պէս կը մերժեն ու է կերպով մասնակցելու:

ուժ տալ այդ ապստամբութեան: Աւ իրերու այս կացութեանն օգտուելով երկրակալի գիւնապահութեան օրկանները, մանաւանդ մէկ երկու ֆրոնտական թերթեր, առաջին թերթը անցան յայտարարելու թէ Մակեղոնիոյ մէջ լուրջ ապստամբութեան մը հետքն անգամ չկայ, թէ մակեղոնական յեղափոխութեան ամէնէն նշանաւոր պարագլուխները Եւրոպա կը շրջին:

Միւս կողմէ Մակեղոնիոյ ազատութեան անձնուէր բարեկամներն երկուք՝ Հ. Կլաւսիսն և Սիմոնիշի որչա՞մ ըլլալով ազդեցութիւն րանցնել անգլիական կառավարութեան վրայ, որ սա հետաքրքրի այդ ղգաղաք երկրին վիճակովը, կանխաւ յայտնելին նախարարական լորտ Պաշտօնին թէ իրենք իրենց հարցանքին մէջ հարցապնդում մը ունին րենիք՝ Մակեղոնիոյ մէջ սիրող անհաւատար կուսի մասին. լորտ Պաշտօնը այդ աթիւ տեղեկութեան ու գեց Սեւանիկի անգլիական հիւպատոսէն և պատասխան ստացաւ թէ մակեղոնացիներու ապստամբութիւնը աննշան րան մըն է և ապագային համար գուրկ ու է կարելի որոշման: Աւ երբ լորտ Պաշտօնը հարցող այս տեղեկութիւնները Պ. Հէրպէլի իշխանութեան, վերջինը ստիճուած եղաւ ետ կենալ իր հարցապնդումէն:

Թէ Սեւանիկի հիւպատոսը ինչ ազդեցութեան քաղց իր տեղեկութիւնները ապստամբութեան շնորհիւ և ապագայ կարելի որոշման մասին, այդ յայտնի չէ, բայց գոնէ սա յայտնի է թէ ըստ ըրտի անհաւանական չէ և արագական միջամտութիւն մը երբ աւելի լայն ձուլ ստանայ ապստամբութիւնը և այդ պարագային Մակեղոնացի հայրենասիրներուն համար ուրիշ ընելիք կը մտաւ արդեօք, բացի այն համարալի գործունէութիւնէն, որ առ այժմ ամէն նկատում մէկ կողմ դնելով միացած ուժերով աւելի ևս պիտի բորբոքէր անգամ մը արդէն բռնկած և լաւ թէ զէ պատրաստուած ապստամբութիւնը Մակեղոնիոյ մէջ:

Հիմակ կերելի թէ Պ. Սիմոնիշի կօմիտէն զգալով լորտ անպատասխանութիւնը իր բռնած ընթացքին, վերջին անգամ շրջաբերական մը կ'ուղղէ բոլոր քաղաքներու կօմիտէներուն սա մտքով թէ՛ նկատելով որ հասարակութեան մէկ մասը իրենց ընթացքին մէջ միակ արգելք կը տեսնէ Միխայիլովսքի-Յոնչէվի ձեռնարկած գործը՝ կարծիք մը որ սխալ է, որովհետեւ իրենք բաւականացնել միայն իրենց իրենց ճշմարիտ գոյններովը ցոյց տալ հարկ եղած պարագաներուն, այժմ իրենք կը հրաւիրեն հասարակութիւնը յարատեւել իր հայրենասիրական ոգեւորութեան մէջ, և որպէս զի ապացոյցը տան թէ արգելք չեն ըլլալ որոշին կորոշեն դադարեցնել իրենց պաշտօնական օրկան շրջանի մէջ իր թեր, յայտնելով թէ ուրիշ ոչ մէկ թերթ պիտի թարգման հանդիսանայ իրենց գաղտնաբերութեան:

Մեզ համար աւելի քան փափաքելի էր այդ կուսակցական ոգին միանգամ ընդմիջու վերցած և եղբայրորէն համերաշխ տեսնել մեր Մակեղոնացի բաղադրիչ եղբայրները, որոնց թէ մէկին և թէ միւսին անկեղծ հայրենասիրութեանը ոչ ոք իրաւունք ունի կասկածելու:

ԿՈՅԻՆԷ ԼՈՅՏԵՐԵՆ ԾԵՆՈՒՄԾ (Գ)

Ուսր, 1 Հոկտեմբեր

Յայտնի է թէ վերջերս Եւրոպայէն հոս՝ Ամերիկա եկած էր ախարհաճանօթ ֆրանսացի հրապարակագիր Բեռնար Կոնիէ: Եւրոպայէն Մոնթթերթի և Եւրոպայի մէջ հայկաներ ղառին անէնէն ջերմ ու ազդեցիկ պաշտպաններէն մէկը: Երկու հրապարակագիրը մեծ ու խանդավառ քննադատութիւն գաւառ թէ հայոցն թէ ամերիկացիներուն կողմէ: Ինչեքաւ կիրակի Ռոսարի Հ. Յ. Կաշապեթեան քօմիտէն իր հրապարակային ժողովին կը հրաւիրէ յարգել հիւրը: Պ. Կոնիէ սիրով կը ընդունի այս հրաւերը:

Մտկայի անակնկալ և անորակի միջադէպ մը ամէն րան տպելու վրայ րբաւ:

Ամերիկայի մէջ Հ. Յ. Կաշապեթեան ժողովրդեան կողմէ գտած համակրութիւնը, որ հետզհետէ աւելնալու վրայ է, հակառակութեամբ և գայտնով լեցուցած է հայկաներ կուսակցութեան անդամները, որոնք կը ջանան ամէն միջոցով վարկաբեկել Կաշապեթեանը և ապրիլը ըստ անոր գործունէութեան:

Պ. Ա. Վառնիսի մասնաւորապէս առարկան է այդ մարդոց թշնամութեանը, վատ զի Հայրենիքի խմբակը րապետ իր անկողն ու ցնցող գործունէութեանը և հրապարակագիրութեանը մեծ համարում և ղարկ կը վայելէ:

Արդ տեղւոյն հնչակեանները, չոր ու զիւրային նօսախօսք մը, կը մտածեն Կաշապեթեանը և իր նակաստարը հարգութեան արժանապատիւ: Ինչպէս Կոնիէն Կաշապեթեանը արգելել և անա թէ այդ քաղաքին ինչպէս հասան իրենց նպատակին: Ինչպէս ըսի, Կոնիէն ներքով ընդունած էր ասանախօսել Ռոսարի Կաշապեթեանը կեղծութիւն մը: Հնչակեան գաւաղի իրենք արտօնող կը մասնաւորապէս փողոցին մէջ ուսկից պիտի անցնէր պ. Կոնիէ՝ ժողովարան երթալու համար: Կոնիէն և մի քանի բնակիչներ այդ փողոցին կը ջնասած անգ մեր քաղաքային հնչակեանները կը յարձակին Կոնիէի վրայ, կը բռնեն անոր մօրու բէն և բուռն հարուածներու տեղատարակի մը տակ գետին կը տապալեն զայն: Կոնիէն արդ Կաշապեթեանը և Կաշապեթեանը կը հասնին, ինչպէս նաեւ քանի մը կը լինի զաշապեթեաններու և վառուրը ցաւ մը կուտան այդ սրիկաներուն զօրս կը յանձնեն ոստիկանութեան: Վառնիսի հրապարակագիրը թէ միայն մը քօմ գացած է, թէ զիւրքը ձեռնու և կան էին այդ մարդիկը լայն սխալած կը Մասնաւորապէս լեւեները կը հարցնէր զեւ շուտով:

Տիգրան Միլանան

(Գ) Մոյն թղթակցութիւնը կը հրատարակեն վերապահութեամբ: Ինչ անգի անոր պատճառ ղգաղաքային հրեշտի բան մըն է ար միջակ արդարանապէս շուտագոյն ղգաղաքէ անոր հաւատալ:

S. Ա.

ՓՈՒՏԵՐ ԵՒ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նախկին հիմնգործ)

Թարիզ, 22 Ապրիլ 1919

Վճարում էր ընթացողները իմ նախկին թղթակցության վերաբերյալ...

Մենք մի անգամ էլ չկատարեցինք...

Հին պայուսակները քարտեզ էլ են...

Փաստը-քարոզը

Առաջնորդը շատ է պահ, ինչպես...

Բայց առաջնորդ Մուրադյանը այդպես...

ՄԱՄՈՒԼԻՆ ԾՈՒՐՁ

Եղևյասանյան քննարկը-Մուրադյանի...

Մի թիվ յեղևյասանյան մարդը թիվ կոսյ...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Գրեթե ոչինչ էլ...

ՄԱՄՈՒԼԻՆ ԾՈՒՐՁ

Եղևյասանյան քննարկը-Մուրադյանի...

Մի թիվ յեղևյասանյան մարդը թիվ կոսյ...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Գրեթե ոչինչ էլ...

ԲԱՆՄԱՐԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Բ. 30

ՊՈՒԿՆ Գ.

Մարտի 15-ին խոսած միջոցին քա...

Գրեթե ոչինչ էլ...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Նրա ցուցերը բովանդակում է...

Նրա ցուցերը բովանդակում է զորքի մասին...

Նրա ցուցերը բովանդակում է...

Նրա ցուցերը բովանդակում է զորքի մասին...

Նրա ցուցերը բովանդակում է...

Նրա ցուցերը բովանդակում է զորքի մասին...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Մյուս, այժմ մենք միանգամայն համոզված...

Թունաւոր շունչին տակ ցամքած, ոգիէ թռիչէ, խանդէ գուրկ, անջիղ, թոյլ. ապիկար գրութիւններ որոնք ոչ մէկ կենսական հարց կը շոշափեն, ոչ մէկ սնունդ կը մատակարարեն միտքին, ոչ մէկ սիրտանք կը ներարկեն վշտակած սրտերու ինչու կը հրատարակուին չես գիտեր:

Ու իրենց տեսականութիւնն ալ, թէն կազմիկազ, պարզապէս սրտնեղութիւն կը պատճառէ: Ո՞վ են այդ մարդիկը և ի՞նչ նպատակի համար ձեռնարկած են այդ հրատարակութիւններուն, արասահմանի ազատ անկաշկանդ միջավայրին մէջ: Տխուր բան չէ՞ տեսնել հրատարակողներ որոնք իրենց տրամադրութեան տակ ունեցած թերթերնին ողորմելի ինքնութեամբ ճարակ կընեն, անոնց լայնարձակ սիւնակներուն մէկ սողը չնուրբելով մեր ժողովուրդին բարոյական անհասունութիւնը պէտքերուն գոհացումին: Գաղութ մը, ինչպէս է Եգիպտոսինը, անհրաժեշտ պէտք ունէր ճշմարիտ, բանիմաց, խղճամիտ թերթի մը որ գաղութին սոցալական, մասերական, բարոյական զարգացման ու պահանջներուն լիութիւն բաւականութիւն տար: Ու երեւակայել որ արտասահմանի հայ կեդրոններուն մէջ նիւթականապէս ամէնէն լաւ վիճակ ունեցող կեդրոնը Եգիպտոսն է: Ուզուած պայմանները լրացնող թերթ մը անհրաժեշտօրէն իր գոյութիւնը պիտի յաջողէր պահպանել Նեղոսի ափերուն վրայ:

Կիներու զարգացման համար թերթ մըն ալ հիմնուեցաւ հոն, «Արտեմիս», խմբագրութեամբ հայ օրերգի մը: Իր առաջադրած նպատակն իրագործելը զիւրին բան չէր, Հայ կնոջ հարցով զբաղելու համար երկար հետազոտութիւններ, ուսումնասիրութիւններ հարկաւոր են: Հայ կնոջ կեանքը երկար զննութեամբ սերտած ըլլալու է մէկը՝ բաղձացուած յեղաշրջումը առաջ բերելու համար անոր մէջ: Հայկական ազատագրութեան կենտրոն հարցին լուծման մեծագոյն օժանդակներէն մէկը պիտի հանդիսանայ հայ կինը. զանիկայայդ բարձր ու նուիրական պայտօնին ձեռնաս ընծայելու գործը ինքնին սքանչելի ձեռնարկ մըն է: «Արտեմիս» իր ձիգը սա նպատակին զործադրութեան մէջ խտացնելու է. հասկցնել հայ կնոջ իրեն ինկած գերք՝ վերածնութեան այն հոյակապ և դժնդակ շարժումին մէջ որմէ կանցնի այսօր հայութիւնը: Ե. Ս.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՁԴ

Ինչպէս արդէն գրուած է մեր թերթին ճակատը, բաժանորդ գրութիւնը ուղղել միեւնոյն ժամանակ բաժնեգիրը պարտաւոր է մեզ զրկել: Հակառակ մեր այս կտրուկ որոշման, դեռ կը գտնուին մարդիկ որ թերթ կուզեն ու գրամը չեն զրկեր: Վերջնականապէս կը ծանուցանենք խօսք չը հասկցողներուն թէ մեր որոշումը յարգողներուն միայն թերթ պիտի զրկենք:

Գաղով անոնց, որոնց ասկէց առաջ իրենց պարտքերուն հատուցման համար մասնաւոր հրաւերներ զրկեցինք, ու շատեր դեռ մեր հրաւերին չպատասխանեցին հնչուէ կերպով, կը ծանուցանենք որ փութան իրենց պարտքը վճարելու, եթէ չեն ուզեր որ խմբագրութիւնն անհաճոյ միջոցներու դիմէ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հայ եկեղեցականութեան պատուհաս մեծանուն սրիկայ Բարթոլոմէոս Չամչեան, զոր կիլիկիոյ կաթողիկոսութեան ընտրելիներու վեցանուն ցանկին մէջ մտցնելու հրէշութիւնը գործած էին, հրաժարեր է եղեր ընտրելիութենէ: Կիլիկիոյ անթուին իր ընտրութեան պարագան ի՞նչ մեծագործ գայթակղութիւն յարուցանելիքը ա՛յս անգամ ըմբռնելու չափ խիղճ ունեցեր է այս վատահամբաստիչը:

«Թանձկը գրէ թէ հայ յեղափոխական քօսիթէն իզմիրի մէջ սպաննել տուեր է հայ երեւելի Մատթէոս Պալեոպեանը:

Պոլսոյ թերթերը կը շարունակեն դրուատիքի պատկեր հիւսել մեւնոզին անուան շուրջը: Կը կարծենք թէ յեղափոխական գործին նպատելու չկամութիւնն է եղած պատճառ այդ եկեղեցասէր՞. հայուն մահուան պատճառը: Դրութեան մէկ սկզբնաւորութիւնը: Երանի՞ թէ շարունակուէր:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

«Պէրլինէր Թանկալաթ» կը տեղականայ իր Պոլսոյ թղթակցէն թէ թրքական կառավարութիւնը ընդ որ հարկ եղած պատրաստութիւնները կը տեսնէ ձմեռնային պատերազմի մը համար: Այս պատերազմին ընդհանրապէս պիտի կարգուի էթնէ միջան:

Պուլկարական թերթերը կը հաղորդեն թէ անցեալ սերբաթ օր Սուլթանը Երզրուի պարտէզներէն մէկուն մէջ պտտած տեսն, իր խնամակերպութեան պէս հագուած մէկը մտեցեր է իրեն՝ ուզելով ալեքսանդրի մը մատուցանել. սակայն Սուլթանին թիկնապահներէն մէկը կասկածի երթալով անմիջապէս ձերբակալեր է անձանթը որուն վերաբերուին տակէն վեցհարուածեան մը և դաշոյն մը գտնուեր են: Գերմանական թերթերը կ'ենթադրեն եղեր թէ մակեդոն. Բ. կօմիտէին կողմէն զրկուած էր Սուլթանը սպաննելու համար:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պուլկար կառավարութիւնը ծանուցագիր մը ուղղեր է մեծ պետութիւններուն, որով բոլորովին կը հերքէ թուրք կառավարութեան այն մեղադրանքը թէ՛ Պուլկարիան ուժ կուտայ մակեդոնական ապստամբութեան: Մի-

եւնոյն ժամանակ տօրթ. Տանէֆի կառավարութիւնը պետութիւններուն ուղադրութիւնը կը հրաւիրէ Մակեդոնիոյ սպանալից կացութեան վրայ, խնդրելով որ անյապալ գործադրուին Պէրլինի գաշնագրին սրամագրած բարենորոգումները, որովհետեւ հակառակ պարագային պուլկար կառավարութիւնը չպիտի կարողանայ առջեւ անուղայն շարժումին, որ գոյութիւն ունի Պուլկարիա ինպատ Մակեդոնիոյ:

Պուլկարիոյ ազգային ժողովը կը բացուի այսօր կէսօրէն վերջը ի բացակայութեան Ն. Ա. Բ. Իշխանին, որ այս պահու կը գտնուի Էվքսինօկրատի պալատը և որոշեր է նախարարապետ տօք. Տանէֆին յանձնարարել գահաճառին ընթերցումը:

Պօֆիայի գիւնազիտական շրջանակներուն մէջ կը հաւատան եղեր թէ ամսոյս 20ին Ռուսիոյ կարող թագաւորը փոխադարձ այցելութիւն մը պիտի տայ Ռուսոնք Պուլկարիոյ իշխանին:

ՖՐԱՆՍԱ

Բարիկէն քաջուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ վերջերս հասնարապետութեան նախագահ Լուպէի վրայ սպանութեան փորձ մը կատարուեր է: Ոստիկանները յաջողեր են ձերբակալել մարդը, որ անիշխանական մըն է եղեր և բուռն դիմադրութիւն մը ցոյց տուեր է ոկեցցէ անիշխանութիւնը, կեցցէ յեղափոխութիւնը՝ ազգակեցով:

Զարմանալին ան է որ ու է զէնք չէ գտնուեր իր քովէն և երբ հարցուցեր են թէ՛ ինչօ՞վ պիտի սպաննէր.՝ Բուռնցքի հարուածներով, պատասխաներ է:

Մ Ա Կ Ե Դ Ո Ւ Ս

Իրէսնայի կիրճը, որ ապստամբութեան երկու ամենակարեւոր կէտերէն մէկն էր, վերջապէս գրաւուեր է թրքական զօրքէն՝ շնորհիւ ապստամբներուն անուշադրութեան: Կիրճը պայտայանուած է եղեր միայն Իրէսնայի գիւղացիներէն՝ առանց անպատմական խուճարու օգնութեան: Գիւղացիներու երկու խուճարն ալ կիրճին մուտքին առջեւ կը գտնուին եղեր առանց ապահոված ըլլալու բարձրագոյն գիրքերը, և այս սխալին հետեւանք թուրք զօրքը քայմաքամի մը առաջնորդութեամբ բարձրացեր է անոնց դիմին վերու և անկէց լեռնային թնդանթիւններէ ռուս և գնդակ տեղացներով գիւղացիները ստիպուեր են քաջուիլ անտառ մը. ուսկից

մինչև իրենց փամփու շահերուն յետինը արձակելէ ետք. ա՛լ բոլորովին ետ քաջուեր են կիրճը ձգելով թուրքերուն ձեռքը:

Առայժմ ճումայի կողմերը 1600 շափ ապստամբներ կան, որոնց կէսը տեղական գիւղացիներ են, Իրիւն լեռան արեւելեան մասը տաճիկներուն ձեռքն է: Տօնչօ և Ալէքսօ խառն խումբերով կը գտնուին Մալէշէփօ: Գեր գնդապետ Նիքօլօֆ և զօրավար Յօնչէֆ իրենց խումբերով գիւղերը կը հետազօտեն ըրջականները:

Իտալիայէն Մակեդոնական Բ. կօմիտէի նախագահ Պ. Միխայիլօսիւն տրուած տեղեկութիւն մը կը յայտնէ թէ իտալացիներու խումբ մը կը պատրաստուի Մակեդոնիա երթալ՝ ապստամբներուն մղած կռուին մասնակցելու համար: Միշչե և հոկտ. 1 խումբին անգամ գրուեր են լաւ զինուած և զինուորական կը թուութիւն ստացած 450 երիտասարդներ:

Ա Ձ Դ

Հոգաբարձութիւնս պարտք կը սեպէ ծանուցանել պատուարժան ծնողաց թէ աշակերտներու ընդունելութեան գործողութիւնը կը վերջանան ներկայ ամսոյս վախճանին: հետևապէս անոնք որ դեռ տղայ ունին դպրոց զրկելիք, թող փութան, վասնզի ամսոյս լրանալէն յետոյ՝ աշակերտ չպիտի ընդունուի:

Ի դիմաց հոգաբարձութեան Ազգ. երկսեռ վարժարանաց Ատենայպիբ Ատենայպետ Գ. Աւագ ան Յ. Մ. Թովմասեան Վառնա 14 հոկտեմբեր 1902

ՊԱՏԵՐԱԶՄԱՐԴ ՎԱՋԴԷՆ-ԵՐԿԱՐԱՆ

Լոյս տեսաւ «Վազդէն»-Երզարանը, բանաստեղծութիւններու, ազգային յեղափոխական, սիրային և ժողովրդական երգերու ճոխ հաւաքածուն, որուն անհամբեր կ'սպասէր ընթերցասէր հայ հասարակութիւնը:

600 մեծագիր երեսներէ բաղկացած, ընտիր թուղթի վրայ, հեղեղիկ պատկերներով զարդարուն սոյն երգարանը մեծ պակաս մը կուգայ լրացնելու մեր ազգասիրկ գրականութեան մէջ:

Գինն է, ճամբու ծախքով 1. 50 Գինը փափագողները դիմելու են Բ. Հօրանեան 379 Բ. Օ. Պօստ, Կիև Մաս. (Ի. Ս. Ա.)

Ձեռքէ կը ծախուի նաեւ Հայրենիքի տպարանին մէջ

Հայրենիք Բուպ. Բօ.

61 հուկ Ս. Պօստով Մաս. (Ի. Ս. Ա. Արտասահմանի համար 7 ֆրանք Պարսկաստանի համար 6 ֆրանք

Ծանօթ.՝ Սոյն երգարանը որպիսի որ քանի մը անգամ անհատական Կանքերով հրատարակուած է, սակայն ամբողջ հատուած յատկացուած է զուտ բարեսիրական գործի մը: ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница «Важность», Варна